

**Մարզպետի տեղակալ Լևոն Մարգարյանը մասնակցեց Աղքատության հաղթահարման միջազգային օրվան նվիրված քննարկմանը 17.10.2014թ.**

Հոկտեմբերի 17-ին Աղքատության հաղթահարման միջազգային օրվան նվիրված կլոր սեղան-քննարկում էր կազմակերպել «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպությունը: Միջոցառումը կայացավ «Աշխատանքի և արժանապատիվ կյանքի իրավունք» >> ծրագրի շրջանակներում: Կլոր սեղանի մասնակիցները ներկայացնում էին տարբեր կառույցներ. պետական, հասարակական, գործարար, զանգվածային լրատվության միջոցներ և այլն: Ներկաներին ողջունեց, ակտիվ քննարկում ծավալելու կոչով հանդես եկավ Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Մարգարյանը, ապա ներկայացրեց աղքատության հաղթահարմանն ուղղված գործընթացները Տավուշի մարզում: Յուրաքանչյուրն իր ոլորտում, առավել վիճակագրական տվյալներով, զեկույցներ ունեցան Իջևանի զբաղվածության տարածքային կենտրոնի ծրագրերի պատասխանատու Սմբատ Յուզուլյանը և Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկի կառավարիչ Սասուն Ասատրյանը: Հաշմանդամությունն ու աղքատությունը թեմայով զեկույց կարդաց «Հույսի կամուրջ» ՀԿ Իջևանի մասնաճյուղի տնօրեն Արմինե Ներսիսյանը: Միջոցառումն անցավ ակտիվ քննարկումներով, իրենց կարծիքները հայտնեցին նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Ընդգծվեց, որ նման քննարկումների ժամանակ միշտ կարևոր եզրահանգման են գալիս, և արդյունքում եթե մեծ խնդիրներ չեն լուծվում, ապա փոքր հարց որևէ ընտանիքի, մարդու կամ երեխայի համար անպայման լուծում է ստանում: Նման քննարկումների ժամանակ են ծնվում հետաքրքիր գաղափարներ: Բացառություն չէր նաև այս հանդիպումը: